






Ձեռքի, ոտքի ու սոփի եւ ձեռքի  
միանգամայն մեքենաներ  
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհի դիտէ թէ՛

**Ս Ի Ն Կ Է Ռ**

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՓԱՆԱՏԱՆ

**THE SINGER**

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ  
ՄԱՍՆԱԿԱԶԱՐՈՒՄՆԵՐ

- |         |                                                        |
|---------|--------------------------------------------------------|
| ԲՆԲԱ    | ( 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
|         | ( 2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիւէին դէմ.              |
| ԿԱԼԱԹԱ  | ( 1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.                        |
|         | ( 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.                 |
| ՊՈԼԻՍ   | ( 1. Սուլթան համալ .                                   |
|         | ( 2. Սուլթան Պէյազլի, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻԼՏԱՐ | 2արշը Պօյու, թիւ 120 .                                 |

Կատարեալ երաղխաւորութիւն

Մասնաձիղեր զաւտներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզօղլուի տունը:

## Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅԾ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱՅ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ



**ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ**

Դրամագումիս եւ Պահեսի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

**ՀԻԴԵՂԻ ՃԻՒՂ**

Դրամագումիս եւ Պահեսի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կեանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգենաւի՝ եւ առագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեքանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիւզօր Գերիայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 512

ԾԱԲԱԹ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

### ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Քաղաքում եւ սարեւոյս (հոնքագրական) . — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ : Բանաստեղծն եւ իր երգ (Քերթուած) : Քաղաքագրութիւն ու նոր կենցաղագիտութիւն (Կրթութիւն եւ դաստիարակութիւն) . — ՖԻՄԻ ՇԻՐԻՆԵԱՆ : Սիրոյ երգեր . — Վ. ՄՈՄՃԵԱՆ : Բեռնի մը նօթերը . — Գ. ՄԻՅՄԱՐԵԱՆ : Խօսքեր նոր տարիին (Բայց նախ խնկնաւ սա՛ գաւաթ մը գինին) . — ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ : Զագեոսին ասանկաբոյժ եղբայրը . — ՄԱՐԳԱՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ : Կաղանդեցիներու . — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Շաքարուան շուրեր :

## ՔԱՂՈՒԱԾՔ ԵՒ ՏԱՐԵՄՈՒՏ



Այս թիւով « Հանրագիտակ » կը բոլորէ իր տարին , ամբողջ 52 թիւ , անընդհատ եւ շարունակական հրատարակութեամբ :

Գաղտնիք մը չէ մեր Գերազնիւ Ընթերցողաց եւ Պատ. Բաժանորդաց համար , երբ ըսենք թէ՛ 1901 էն ի վեր « Լոյս » ով սկսած այս խստապահանջ եւ բազմավաստակ (հոս վաստակը աշխատութիւն իմաստով՝ եւ ոչ թէ գրամական շահու ! ) գործը , անցեալ տարի ստիպուեցանք թողուլ նոյնին կրօնաթերթի վերածուելուն առթիւ , եւ շարունակեցինք հրատարակել « Հանրագիտակ » ը փոխան « Լոյս » ի , նոյն ուղղութեամբ եւ նոյն ծաւալով , եւ քիչ մ'ալ խնամօտ , եթէ ներուի մեզ ըսել :

Առջի օրէն մեր նպատակն էր՝ զուարթը , հաճելին եւ զբօսեցուցիչը խառնել լրջութեան , իմաստասիրութեան եւ բանաստեղծութեան , այսինքն՝ օրուան գրական պարբերականներուն մէջ հաճելի բերանփոխ մը ըրած ըլլալու անյաւակնօտ մտածումով :

Երգիծաբանութիւն և Զաւեշտ, գրականութեան մէջ այն երկու քոյրերն են՝ որոնց ձեռքը խնդրողը թէեւ քիչ և հազուադիւր, սակայն անոնք չեն դադարիր իրենց ուրոյն տեղը ունենալէ գրականութեան մէջ :

Անոնք որ չորս տարիէ ի վեր հետեւած են մեր պարբերական հրատարակութեանց, անշուշտ կը հաստատեն այդ ճիւղին անհրաժեշտ գոյութիւնը մամուլին մէջ, ճիշդ ինչպէս պիտի պահանջուէր գաւաթ մը մաշակա լիարժամ կերութեամբ մը վերջ :

Ահա մեր թերթը մաշական եղաւ ամբողջ չորս տարիներ : Բայց ընթերցող հասարակութիւնը գոհ մնաց . . . այդ կէտը մեզ անկ չէ յիշեմ կենցաղագիտօրէն :

Արդ, 1901էն մինչև 1905 տարւոյն վերջը, որչափ կարելի է ջանացինք գոհայնել մեր ընթերցողները, թերեւս գտնուեցան թիւեր՝ որոնք մէջ թեր ու դէմ գաղափարներ, կարծիքներ, հրատարակուեցան, բայց երբ ուշի ուշով քննուին մեր ամբողջ չորս տարուան հաւաքածոյները, հոն յայտ յանդիման պիտի ցոյլայ մեր միակ և միմիակ նպատակը, որ է ԶՈՒԱՐՃԱԼԻՆ, ՀՍՃԵԼԻՆ և ԶԲՕՍԵՑՈՒՑԻՉԸ :

« Հանրագիտակ » ի ամբողջ տարուան մը շրջանին մէջ մեզ օժանդակող Պատ. Բաթանորդներուն, Խմբագիրներուն, և Թղթակիցներուն՝ կը փութանք մեր ջանք շնորհակալիքը յայտնել, անոնք պարծանքը եղան գործին յաջողութեան, իրենց ինքնաբեր աշխատակցութեամբը, գործին յառաջդիմութեան, գեղեցկութեան և նպատակին հասնելու մէջ ցոյց տուած ջանքերովը : Merci :

Շնորհակալութիւն նաև մեր Պատ. Բաթանորդներուն, որոնք օրը օրին փութացին իրենց նիւթականը հասցնել մեզ, ինչպէս նաև շնորհակալութիւն մեր Պատ. Գործակալներուն, որոնք ջանք չի խնայեցին աւելցնելու մեր թիւաթիւը, բան մը՝ որ աշխատութեամբ կրնայ յաջողիլ :

Երբ բաթանորդներու մեծ մասին շնորհակալութիւն կը փութանք յայտնել, հարկաւ անոնք, որոնք չեմ գիտեր ինչ նպատակաւ չեն ղրկած իրենց հաշիւը, հարկաւ կգգան, և եթէ փոքր ինչ պատուոյ զգացում ունին, կանգնաբան իրենց այս անվայել և ստոր արարքին վրայ : Բայց իբրև անաչառ և մամնատեաց անարեւոյ, կրկին կը փութանք մեր շնորհակալութենէն բաժին մ'ալ անոնց հանել, քանի որ . . . անկուտի ձանձրոյթը առին տարի մը կարգալ մեր « Հանրագիտակ » ը :

Շնորհակալութեան լայն բաժին մ'ալ կը պարտաւորինք յայտնել՝ մեր Գերազնիւ Պաշտօնակիցներուն, որոնք իրենց սիւնակները լայնօրէն բացին քաջալերելու համար մեր աշխատութիւնը, նա մանաւանդ մեր անզուգական օրաթերթերը ԲԻԻԶԱՆԴԻՈՆ և ՄԱՆՉՈՒՄԷ, որոնք հաճեցան իրենց թերթերուն սուղ էջերուն մէջ յիշել և ծանուցանել թերթիս բովանդակութիւնը, և գնահատել մեր այս ձեռնարկը :

«ՄԱՆՁՈՒՄԷ» հայաթերթը մասնաւորապէս, որ երբէք չի զլայցաւ քաջաւերել մեզ ամէն առթիւ, հրատարակելով «Հանրագիտակ» ի մանրամասն բովանդակութիւնը, բան մը՝ որ թերթին անկողմնակալութիւնը, անաչառութիւնը և «կգբունքը վեր կը հանէ»:

«Հանրագիտակ» իր չորրորդ շրջանին այս վերջին թիւով կը փութայ իր անկեղծ շնորհակալութիւնները յայտնել՝ Մանգումէի Տէր և Տնօրէն՝ Ազն. Յովհաննէս Եփէնտի Գոյսէրլեանի, ինչպէս նաև թերթին Պատ. Խմբագրութեան, իրենց պաշտօնակցին դէմ տածած այս տաք վերաբերումին առթիւ:

«Հանրագիտակ» ի յաջորդ շրջանը կ'սկսի նորանոր կարգադրութիւններով, զոհողութիւններով, և խմբագրական ուժեղ մարմնով մը, որպէս զի ընթերցող Պատ. Հասարակութիւնը անոր մէջ կարենայ գտնել՝ գրական այն բոլոր առաւելութիւնները, որոնք կը պահանջուին լաւ կազմակերպուած պարբերականէ մը:

Թերթի մը ընթերցողները գոհացնելը՝ կարծուածին չափ դիւրին չէ, պէտք է ըսել, եթէ կայ դուրս մը՝ աշխատութիւն մը որ միտքը կը յոգնեցընէ ու սիրտը կը մաշէ, այդ ալ գրական զբաղումն է, թերթի վարչութիւնը:

Բայց անգամ մ'ընդ միշտ կուգանք յայտարարել թէ՛ «Հանրագիտակ» ի վիճակի է այսօր գլխէ անցնելու բոլոր դժուարութիւնները՝ հասնելու համար իր նպատակին, որ է՝ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ:

Ա. ՓԱՓԱՋԵԱՆ

## Բ Օ Թ

Խորին ցաւով մը կը գուժենք մահը՝

ՏԻԿԻՆ ԱԳԱՊԻ Մ. ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆԻ

Ք Ո Յ Ր

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԳ ՀՕՐ

որ կնքեց իր մահկանացուն երեքշաբթի գիշեր Բերա իր բնակարանը:

Տիկին Ագապի ժամանակէ մը ի վեր կը տառապէր թոքատապէ, որուն անողոք հետեւանքէն դժբաղդաբար չի կրցաւ ազատիլ: Իր մահը և անոր պատճառած սուգը ողբալի է արդարեւ, ոչ թէ միայն Նորին Ամենապատուութեան և իր Ազն. Կողակցին, այլ և բոլոր պարագաներուն և ծանօթներուն, որոնց ամենուն սիրելին էր ու յարգելին: Իբր տիպար մայր, հասցուցած է մէկ մանչ և երկու աղջիկ դաւակներ, որոնք օժտուած են մայրենի բարեպաշտութեամբ և կրթութեամբ: Այսօր իր անմխիթար սուգը կ'օղբան ամէն առնոք՝ որոնք մօտէն կը ճանչնային հանգուցեալ Տիկինը:

«Հանրագիտակ» այս տխուր առթիւ իր խորին ցաւակցութիւնը կը փութայ յայտնել՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Միհրան Էֆ. Տէր-Ներսէսեանի և զաւակաց, ինչպէս նաև՝ Օրմանեան, Տէր-Ներսէսեան գերդաստաններուն և բոլոր պարագաներուն, իրենց վիճակած այս ծանրածանր սուգին առթիւ:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ն

( 7 )

Ե Բ

Ծ Բ Ե Բ Գ

## Հ Ի Ն Տ Ա Ր Ի Ն

Տխուր դեմք մը չ'է՛մ սար գրչիս,  
Ո՛ր հին սարի, երբ կը փայլէիս,  
Թերթ մ'ալ խաճ մեր կեանք-գիրքէն,  
Չոր տղեցիկ մեր սեր քե քէն,  
Չուարքադեմ կ'ոգեմ, « է՛րբ ողջ », ,  
Հուսկ բանքն իմ Բեզ, յարգանքս անբողջ:

Դան, զնան ամերն, որպէս անցորդ,  
Մարդոց ձեռքին, կիրքին կցորդ,  
Մարմ մ'իսկալ՝ անձեռն կսակ,  
Թողով հե՛տ մ'ալ, իբր յիշատակ,  
Մէջ պատմութեան ազգաց, ազանց  
Նոր ապստեանցն դա՛ւ գերագանց:

Դո՛ւն ալ, սարի՛, եկար զնացի,  
Բարիք ըրիր միշտ անձանձի,  
Խաղաղութեան դուն անձնուր,  
Դադրեցուցիր շատ կոխներ,  
Հունձերովդ ալ դեռ ակադանն՝  
Անբարք, մասնակ մեր մնան լեցուն:

Գտուի՞ գոր սուր մեր ծառերուն,  
Թե պարտիպաց ծաղկունք սիրուն  
Կը զարդարեն մեր սեղաններ  
Ու նոր տալոյ ձօնուիկն նուր,  
Բարիքդ երգեմք, սարի՛, քիչ մ'ալ  
Չուարքորեն, քեռ անցեալ:

Շատ տղանք ըրիր փեսայ,  
Կոյսեր՝ նոր հարս, որ կը յուսայ  
Տալ յաջորդիդ մանկ կամ աղջիկ,  
Գրկէ ի գրկ սիրոյ շրջիկ,  
Շատ մ'օժիս ալ ըրիր պատանկ,  
Թախծեցիր շատ խանդաղատանկ:

Շատ արեւ ալ, սիրոյ ծիսակ,  
Ա՛խ ու փախով դեռ կը միսակ,  
Արցունքն ըրած իրենց մեղան  
Սիրոյն խաղկանք գրչով կուշան,  
Միշտ Ռուսոյ մը փանցեմք ի վեր  
Քեզնուելով ո՛րս կարեկեր:

Դպրոցներէն դուն փաղեցիր  
Երջանաւարտ ցնադաձիր,  
Շատ մ'օրհորդ փարձուհիցու,  
Շատ պարուններ նոր տիրացու  
Մեր ժամանակ քե պարտանկ  
Ըրիր նոր զանձ, կամ նոր խալ սանձ:

Տուիր ալ մամուլոյն առատօրէն  
Կարձ քե երկան-մազ սեռերէն,  
Շատ մը գրող, գրողուհի,  
Բուսած տկուն որպէս գիհի,  
Խեղով ալ սուր կամ բուր հանձար  
Առատ որքան բանջարն, հաճար:

Խանութպաններ մեքի հացիկ  
Թերթերն անբողջ ողողեցիկ  
Վեղարաւոր քե անվեղար  
Թողումներով երկան-շաղկար,  
Դրոխն յ'անկեր, փանցեմք ի ցեխ,  
Շաղկարտ որպէս անձեղ:

Չոյիլուններ կրիսիկոս  
Ըրիր շատ կեղծ Արիստարքոս,  
Մեքով ծանծաղ շատ մ'ապիկար  
Պարծեցուցիր մեզ նոր երկար,  
Մասաշարանն ալ՝ վիպասան,  
Զրաքանն ալ՝ զուարճասան:

Խնդացուցիկ մեզ հանապազ  
Լեզուով փարպէս մեծ օգգապազ  
Ու սփածան խեղճի խեղճակ  
Փուն խօսերուն փոք պղպշակ,  
Ռանաւոր ու քե արձակ  
Մեզ ծախեցիկն սրցակ տձակ:


Սակալն շատ ալ կարող գրիչ  
Տուիր մեքի յուսաւորիչ  
Թողումագիր տաւաքան,  
Ու տրախու երգիծաքան,  
Ընկիր ընկիր վիպասաններ,  
Խորհրդածու ճարտասաններ:

Պատի՛ քեզի. ո՛ր հին սարի,  
Այս իմաստուն միտքերն արի,  
Բու գրական Զոդիակոսիկ  
Եղան պարծանքդ իմիասիկ,  
Շնորհիւ անոնց եւ մեր Մամուլ,  
Զեղա՛ւ երթիք չոր ու ամուլ:

## ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՈՒ

## ՆՈՐ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ



Գ.

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

## ԵՒ ԳՈՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Կրթութիւն ըսելով կը հասկնանք ընդհանրապէս այն ծանօթութիւնները, գիտելիքը, այն սկզբնական գաղափարներն ու հմտութիւնները՝ որք կը ստացուին դպրոցին մէջ՝ ուսուցչաց ձեռքը, դպրոցէն դուստներ յատուկ ուսումնասիրումներով:

Յորչափ ապրիս հետամուտ եղիր ինքզինքդ կրթելու, աւելի իմաստուն ըլլալու՝ ըսած է Սողոմոն, Հին աշխարհին եօթն իմաստուններէն մին. որ մեր այս նո՛ր ժամանակին ալ, իմաստուն պատգամախօսը կրնայ համարուիլ միշտ: (Իմաստութիւն չինէ զտուն) ըսած է Սողոմոն իմաստուն Աստուածաշունչին մէջ:

Երբ ո եւ է մէկը սրտովին ու անկեղծօրէն կը փափաքի ինքզինքը կրթել, բան սովորիլ, կը կարողանայ միշտ գտնել անոր միջոցները, եւ, հետեւաբար, լիովին կը շահի այդ առթիւ ի գործ դրած իր բոլոր ճիգերուն չու անխոնջ աշխատանքներուն երեսէն կրած զսոցութիւններն ու զրկողութիւնները: Եւրոպական եւ ֆրանսական Քաղաքակրթութեան Պատմութեան ակադեմիկոս եւ տաղանդաւոր հեղինակն իր Բարոյախօսութեան մատենին մէջ կը յայտարարէ թէ՝ Կրթութիւնը կը նախագիշտուի մարդը մտքի փոքրութենէ որ կը կայանայ դուզնաքեայ արժէք ունեցող բաներուն մեծարժէք կարեւորութիւն տալուն մէջ: Կրթութեամբ կ'ուսնինք ուղղամտօրէն դատել իրերն ու անձերն, անոնց երեւոյթներն ու արժանիքներն իրարու հետ բաղդատելով:

Եւ մեր մտածումներուն ու ծանօթութեան շրջանակն ո՛րքան աւելի ընդլայնի նոյնքան նուազ կը բերուինք խոշորցնել մեզ վերաբերող գործերն ու իրերը: Ժիւլ Բը-

լարթէն անշուշտ իր Քաղաքավարութեան ու Գիտելիք Պարտիքին մէջ վերելի տողերը գրած ատեն՝ անշուշտ մտքի տեսակ մը իմաստուն քաղաքավարութեամբ ջրել, ջրնջել կ'ուզէ Անգլիացի նշանաւոր ընկերաբան ու քարոյախօս Հէրպերթ Սթենսէրի սա տառադաւան կարծիքը՝ որով կ'ըսէր, կրթութեան վրայ ազդեցութիւն չեն ընել, մարդը չեն կարող բարեկրթել. թէեւ իր կեանքի վերջին տարիներուն մէջ, կրթական ճառի մը մէջ ետ առաւ իր այդ արտառոց կամ ծուռ կարծիքը իր քարոզած իմաստասիրութեան ծրագրէն:

Ո՛չ որ կ'ուրանայ թէ բարեկիրթն անկիրթէն այնքան տարբեր է որքան լոողը խուլէն կամ տեսողը կոյրէն:

Կիներն անհաղորդ ընելու չէ, այլ միշտ խելամուտ գիտութեանց վերաբերող կրթութեան, որովհետեւ կրնան օգտակար ըլլալ անոնց զարգացումին եւ բարօրութեանը:

Երիտասարդ կամ մատաղատի դասերուն աւանդուելիք տաղանդի վերաբերող կրթիչ ուսմանց ու գիտելեաց մէջ, նախամեծար ընտրելու է օգտակարը հաճելիէն:

Կին մ'երբ կրթեալ ըլլայ, առտնին ներքին կեանքին զարդարանքն ու վայելչանքը կ'աւելցնէ, եւ միշտ օգտակար կ'ըլլայ իր տան մէջ:

Պէտք չէ չփոթել կրթութիւնը դաստիարակութեան հետ, դաստիարակութիւնն է ի գործ դնել կենցաղագիտութիւնը մեր նմանեաց հետ մեր ունեցած յարաբերութեանց մէջ:

Սովորութիւնները, բարքերը, բարոյական վարմունքը դաստիարակութեան մասը կը կազմեն. ծանօթութիւնները, գիտելիքը, ուսումը կրթութեան բաժինն են, կրթութեան կը վերաբերին:

Ուր որ չիկայ դաստիարակութիւն՝ հոն չիկայ մարդկային ընկերութիւն:

Բարեւոք դաստիարակութեան մը հասնելու լաւագոյն միջոցը անոր հաւնիլն է:

Մարդ որքան աւելի կրթեալ ըլլայ այնքան աւելի դիւրաւ կը հասնի բարոյակաւութեան բարձր աստիճանի մը:

Կրթութեամբ կ'ըլլանք գիտուն, դաստիարակութեամբ կ'ըլլանք լաւագոյն եւ աւելի պարկեշտ:

Անոնք որ լաւ դիտած են՝ նշանակած են թէ մայրերուն ազդեցութիւնը, թէեւ աներեւոյթ, բայց ոչ ինչ նուազ մեծ է:

Թէ որ բարեոք կատարեն իրենց պատկանած պարտաւորութիւնները, թէ որ բարեոք ուղղութիւն մը տան մանկութեան, ամէն ինչ լաւ կ'ընթանայ, ընտանիքները կ'ըլլան երջանիկ, ժողովուրդները ծաղկեալ վիճակ կ'ունենան: սակայն, ընդհակառակն, եթէ կինն է թեթեւաբարոյ, անկրօն, գէշ կըրթուած, մազերն երկայն խելքը կարճ, իր անձնական հաճոյքէն անդին ուրիշ զբաղում չսիրող, այնպիսի յուսերարոն իր ընտանիքը ապականութեան, մոլութեան ու դժբաղդութեան կը մատնէ, այն ատեն մարդերը, մատաղահասակ դեռակի աղջիկները երիտասարդները կ'ըլլան թուլամորթ, թեթեւոյրիկ, կը մնան սկզբունքէ ու բարոյականէ զուրկ եղկելիներ:

Տեսէք մօր մը հրաշալի ազդեցութիւնը իր զաւակաց վրայ, Հայրերէն գերադրապէս լաւագոյնը, դերազանցապէս լուսաւորեալը, չկրնար ոչինչ ազդել անոնց դաստիարակութեան վրայ, թէ որ կին ամուսինը այրին հետ միասնաբար չաշխատի անոնց դաստիարակութեան համար, վասնզի, առաջին տարիներուն մէջ նամանաւանդ տղայք ամէն բանի մէջ իրենց մայրերը նախամեծար կը համարին, անոր կը յարին միշտ: Իրենց մօրմէն է որ կ'ընդունին բարւոյ եւ չարի առաջին գաղափարները, եւ այս գաղափարները, այս սկզբունքները, ինչպէս նաեւ լաւագոյն դաստիարակութիւնը զոր քաղաքացին ընդունած է մօրմէն, իրենց մտքերուն մէջ կը մնան միշտ անջինջ, քանզակուածի պէս հաստատուն: Նոյնպէս է նաեւ կինը տան ներքին մատակարարութեան, առտնին տնտեսութեանը մէջ:

Ամենէն գործունեայ, ամենէն խելացի մարդը ի զուր պիտի աշխատի աւելցնել ու պահպանել իր տունին բարեկեցութեան վերաբերեալ բաները, եթէ իր կին ամուսինը չօգնէ իր ամուսնութեամբ ընտանեկան ներքին մատակարարութեան գործը կառավարելուն մէջ: Կինն է որ, իր վարքովն ու բարքով տան մէջ էրկանն առտնին կիանքը

հեշտալի կամ անտանելի կ'ընէ. կրնայ իր այրը կործանել կամ անոր բարօրութիւնն աւելցնել: Կինը կրնայ իր ամուսնոյն ներշնչել եռանդ, կորով ու քաջութիւն ձեռնարկութեանցը մէջ կամ զայն զգուցնել ու ջլատել: Կինն է որ կրնայ վերջապէս ամուսինը ամէնուն ակնածանքին, արժանացնել, կամ հասարակաց ծաղրութանակին, այլոց նախատինքին ու բամբասանքին մատնել իր էրիկը: Կիներուն կրթութիւնը ամէնէն մեծ կարեւորութիւն ունի: Երանի այն մարդուն որ կրթեալ կին մ'ունի: Հազար անգամ երանի այն զաւակներուն որ կրթեալ մայր մ'ունենալու գեղեցիկ բաղդն ու մեծ փառքը ունին:

Սողոմոն իմաստուն կ'ըսէ, «Կին ժրագլուխ՝ պսակ է առն իւրում»: Իմաստուն կին մը տունը դրախտի կը վերածէ, անխելք կինը տունը դժոխք կ'ընէ: Յարգենք բարեկիրթ կիները, իմաստուն մայրերը:

Կիներ, ջանացէք դուք ալ ձեր ընտանեկան ներքին խաղաղութեան, ձեր զաւակաց ապագայ բարեկիրթութեան ու անոնց բարօրութեան սիրուն համար համբերութեամբ տանիլ ինչ ինչ պատահական զրկութիւն ու զոհողութիւն: Կիներն ու այրերն ալ ջանալու են իրենց, աղտոտներն իրենց մէջ լուալ ու մաքրել քան թէ օտարներու առջեւ խաղք ու խայտառակ ըլլալ: Կին մը տունին պահապան հրեշտակն ըլլալ է եւ ոչ թէ կործանարար սատանան: Ո՛ր կին որ կը հաւատայ թէ իր ամուսնոյն կամ դրացիներուն աչքէն գաղտուկ կրնայ գէշութիւն գործել, կամ անհաւատարմութիւնը քողարկել, աղէկ թող յիշէ Աւետարանի սախօսքը «Չիք ինչ ծածուկ որ ո՛չ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ո՛չ ծանօցի»: Խօսք մը որ միշտ ճշմարիտ է եւ ամէն օր իր իրաւունքը պիտի ունենայ: Մարդոց մէջ ամէնէն վատն է ան որ ամուսնացած կին մը զլխէ կը հանէ: Կանանց մէջ ալ ամէնէն գարշելին ու ամենէն անիծեալն է ան որ իր հարազատ ամուսինէն զատ տարբեր մարդու սիրտ ու սէր կուտայ: Նոյնպէս ամէնէն ժանտափուտ, ամէնէն աւելի սինւթոր ու վատախտարակ են այն ամէն մարդեր ու կիներ որ անբարոյական ամուսին-

ներու երես կուտան: Սրիկաներ են անոնք որոնց վր թքեն միմիայն առաքինի մարդեր ու առաքինի կիներ: Բարի մարդեր, ամէն կնոջ մէջ, քոյր մը ու մայր մը տեսնելու են, նոյնպէս եւ ամէն բարի կին, մէն մի մարդու մէջ՝ եղբայր մը ու հայր մը, ջանք մեր զաւակաց տալ բարի կրթութիւն մը, ազնիւ դաստիարակութիւն մը որ կարենանք օր մը բարեկիրթ մայրեր ու բարեկիրթ հայրեր ունենալ: Լկտի երիտասարդ մը, լրբենի երիտասարդուհի մը նոզկանքն ու նախատիքն են, ընտանիքներուն ու ամէն ընկերութեանց:

Լկտի լեզուն լկտի հոգի մը, անբարոյական նկարագիր մը կ'ենթադրէ: Բարեկիրթ մաքրալեզու ըլլալու ենք: Լեզուները սրտին յաւերածէն կը խօսին, կ'ըսէ Աւետարանը: Բարեք կրթութիւն, բարեք դաստիարակութիւն, ահա՛ ընտանեկան ու ընկերական բոլոր բարեկեցութեանց ու երջանկութեանց միակ երաշխիքը:

ՖԻՄԻ ՇԻՐԻՆԵԱՆ

## GO EWAY

Յ. Ալփիար, որուն անունը ի գիր առնելը պատուաբեր չէ այս սիւնակներուն մէջ, քանի որ ընտանեկան մաքուր չընտանեկանութիւն մէջ կը կարդացուի մեր թերթը, իր վերջին խօսքով կուգայ իր սովորական ծիծառ ՍՈՒՌԱԹՈՒԹԻՒՆՈՎ պնդել բանագոյությունեան համար թէ . . . : Բայց ինչ հարկ, քուչուլեա գգալնոցներով զբաղիլ, Յ. Ալփիար անունը բաւական է գիտնալու համար թէ՛ որի հետ է գործերնիս:

Ուշադրենքու հետ գործ չենք կրնար ունենալ, յարգելով մեր սկզբունքը, որ է՝ մենէ վերերուն հետ վիճաբանիլ, ոչ թէ՛ մեր . . . վարերուն հետ:



## ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Օր. \*\*\* ին

Ինչո՞ւ վարդին թուփերը այնքան տոգոյն են, ըսէ՛ սիրելիս, եւ ինչո՞ւ կորսնցուցած են անոնք իրենց գեղեցկութիւնը, որոնց կիսաբաց կոկոններովը դուն կը հրճուէիր ու կուրծքիդ վրայ խօքած՝ սիրոյ երգեր կը հիւսէիր . . . :

Ինչո՞ւ մարգին մեջ մանուշակները այնքան թոռնած են եւ յափառացած ձմեռան սա՛փաւր երեւոյթեն: Օ՛ն նայէ՛ սիրելիս, նայէ՛ անգամ մը անոնց սա վիճակին, որ ձիւնին տակ պատկած, համակ սխրութեան մը եկարտուած են: Անոնք թերեւս կուգեն ընձիւղեղ ու պճնեղ իրենց ցօղունները կապոյտ փոքրիկ գլուխներով, ու տարածել չորս կողմ իրենց բոյրը, կոյսը զգիսէլու համար: Սակայն ի գո՛ւր . . . :

Ինչո՞ւ արեւոյսը օդին մեջ այնքան մեղաւաղման ձայնով մը կ'երգէ: Ինչո՞ւ յաւիտեկ թառուներէն մեղեդիական հոս մը կը բուրէ, որոնք զարնան, մին իր ներշնչական երգովը եւ միւսը իր զգիսի բոյրովը շեցնելով միջոցը, կը հնայէին մեզ . . . :

Ինչո՞ւ արեւը այնքան թաղծագին եւ այնքան պաղ յոյսով մը կը շուրաւորէ մայրերը, ինչո՞ւ ամբողջ երկիրը սգաւորի մը պէս շխուր է . . . :

Ինչո՞ւ ես ինքս աչ այսքան հիւանդ եւ այսքան տրտման եմ: Ո՛հ, տրտման եւ հիւանդ եմ անոր համար՝ որովհետեւ շուրջի քուրթիկ խոցոտող խօսքեր եւ տեսայ քու նայումդ՝ որ ինձ ուղղեցիր, կարծես շուրջ ուղեղով, « . . . կ'ասե՛մ քեզ . . . »: Ա՛հ, ըսէ՛ արեւս սիրելիս, ինչո՞ւ խոցոտեցիր սիրս . . . :

X

Իմ վրաս շատ խօսեցան քեզի եւ շատ անբասանութիւններ քրիկ, աղու խօսքերով խոչնակեցին եռօրինս, բայց ինչ որ իրաւորնէ կ'ընկճէր հոգիս՝ չըսին ան քեզի . . . :

Սեզ կերպարաններ առին եւ գլուխներն ծակն ծակն երեւոյցին ետեւս, կծու խօսքերով ասեցին զիս, եւ դուն ամենուն աչ հաւատացիր:

Սակայն մեկուն բան մը չըսի եւ, ո՛չ ոքի խօսք մ'ուղղեցի, այլ ամենն աչ պահեցի արտա մեջ, ինչպէս որ կը պահէի քու իշխա՛յ սերդ . . . :

Վ. ՄՈՄԵՆՏ

## ԲԵՌՈՅԻ ՄԸ ՆՕԹԵՐԸ

Bon jour !

Բէռագիէն մը՝ եւ Vrais Բէռագիէն մը ըլլալ՝ ապացոյցանելու համար սա սովորական ալաֆուանկա խօսքէն ուրիշ բառ չի գտայ։ Pardon !

Թերեւս զիս տեսած ըլլաք եւ կարելի է շատ անգամ ալ հանդիպած, Սըլանտիտի հայելիակերպ վիթռիներուն ետին, քաթիւրոի ֆուսնեղը, մէզէճի Անտոնիկ աղային, Պօն Մառչեկն, քարձօր սաշահասակներուն վրայ, եւ դունուրեք կողմերու մէջ ... յարգածածի, բայց երբէք լրագրութեան մէջ։

Թէ ո՞վ եմ, խտ չէ՝ ձեր գիտնալիք բանը, ձեր գիտնալիքը քիչ մը վարը պիտի պատմեմ։

Տարին երկու անգամ, Բերան մակնթացութեան եւ տեղատուութեան կենթարկուի։

Ամառ է կ'ըսեն, կը ձգեն կը փախին, ձմեռ է կ'ըսեն հող կը փոխադրուին եւ սակայն՝ թէ ամառ եւ թէ ձմեռ, Պօն Մառչէն մինչեւ Թագսիմ մէկ ժամէն հազիւ կըրնաս կտրել այնքան խիտ կ'ըլլայ բազմութիւնը։ Բերա՞ն ... օ՛ ... նստուելիք տեղ չէ կ'ըսեն ամէն անոնք՝ որոնք բարոյականը փէշ վեր չառնել կը հասկնան եւ կաղանդէ կաղանդ պաշիկ ըսուած բառը կը գործածեն ... ամուսիններու վրայ։

Բերա՞ն ... հիշանալի արուարձան մ'է կ'ըսեն ամէն անոնք, որոնք փոխանակ առջը գլուխ հինգ փարա վաստկելու, պլոֆով մը փոքոր ռեսք կը քաշեն ... ինչպէս նաեւ սեղանին վրայի պիպիշները։

Բերա՞ն ... է՛հ ... գէշ չէ կ'ըսեն անոնք, որոնք միայն ճէճէզ չտկելու համար թիւներով վեր կ'ելլան, եւ մէկ մ'ալ ամառուան գլխարկ կապել տալու համար։

Բերա՞ն ... արքայութեան մինեաթիւնն է կ'ըսեն ամէն անոնք, որոնք ամէն շաբթու հաֆթալիսին եղող կէս անգլիական ոսկին թիւթիւնճիւ Սօթիլիին աւրել կուտան երկու վիռնիկնա ալ ժիլէներնուն գրպանը դնելով։

Մինչ խեղճ Բերան, եթէ ինծի հարցնէք էն foivos վայրն է ապրելու համար, որովհետեւ հող ամէն բան թէ ածան է եւ թէ սուղ։ Յետին աղքատը կրնայ հող ապրուիլ, ինչպէս նաեւ մատի վրայ համրուող հարուստը։

Պզտիկ օրինակ մը տամ, թէ եւ քիչ մը պսնալ։

Անգամ մը նարինջ առնելու համար շիտակ ճամբէն անցնող նարնջաճառի մը հարցուցի։

— Էլլի փարայ. ըսաւ վճռական եւ խորիստ թօնով մը։

Թառապաշի նորէն դէմն ելայ մարդուկին։

— Օթուկ փարայ, ըսաւ մարդը, պզտիկ ժպիտ մ'ալ աւելցնելով բերին վրայ։

Քիչ մ'ալ վար իջայ, երկու երեք փողոց։

— Երիւմի փարայ վեր, գուզում, չունլարը ալ տէ պէնի գուրթար, ըսաւ, այն հէգ մարդը, որ համրանքով կը խօսէր հետս շիտակ ճամբան։

Կը հաւատա՞ք, երբ Պայըր փողոցէն ալ վար, դէպի Թաթաւլայի ձորը գացինք ու կրկին հարցուցի։

— Օն փարայ աղա՛ օ՛ն փարայ, ըսաւ, լալկան չեշտով մը, նայն նարինջներուն համար, որոնց մէկ հատին յիսուն փարայ կուգեր շիտակ ճամբան։

Ահա Բերայի կեանքը, զոր կարծեմ կըրցայ բացատրել պզտիկ օրինակով մը։

Բայց սրովհետեւ մեր ըսելիքները տարբեր բաներ պիտի ըլլային, ուրեմն մօտիկ ըրէ՛ք։

Եթէ կայ բան մը, որուն յարգը գիտնան շատ քիչեր, այն ալ վայելէն է Բերան՝ chaque գիշեր։

Բերայի մէջ դասակարգ մը կայ որ ջըղջիկներու պէս ցերեկը կը քնանան, ու գիշերը կազի լուսով դուրս կ'իյնան տուներէն, գրօններու եւ կամ լաւ է ըսել վաստկելու համար։

Բերայի ցերեկը խանութպաններուն համար է կարծես, ու գիշերը գրօսասէրներուն։

Բան մը ըսեմ կը հաւատա՞ք, Բերայի մէջ քահանաները, երեցկիներն անգամ երեքին կը ճաշեն եւ կէս գիշերը մէկ ժամ անցած

կը քնանան, բայց թէ այդչափ ժամանակ-  
ունան մէջ ի՞նչ կ'ընեն ... ատ իմ գիտնա-  
լիք բանըս չէ, ոչ ալ ձերը:

Հիմա հաճեցէք ինձ հետ Սրբանդիտ մըտ-  
նալ, հիմա որ ժամը երկուքն է (Ը. Թ.):

Առաջին ներս մտնալուդ աչքիդ վարկա-  
ծը, բազմութենէն առաջ երեք բան պիտի  
ըլլայ: Լոյս, ծուխ, ալբօլի հոտ:

Ամբողջ սեղանները գրաւուած են Բե-  
րայի ինսէյիֆէնս դաստակարգին մեծապատիւ  
անդամներէն, ներեցէք, հիմա քիչ մը կը  
տարբերի, փողոցները չըջագայող բռա-  
մաթէֆթի Մարտիկն ալ կուգայ կը նստի,  
եւ ամենայն իրաւամբ, քանի որ գաւաթ մը  
օղիին մէկ զրուշ տալու չափ մանտրութիւն  
գրպանը:

Տաք մթնոլորտ մը, եւ տաք conversation:

Բայց եթէ ուրախալի պարագայ մը եւ  
կամ յիշատակութիւն մը կայ ընելիք՝ ան ալ  
սա է որ, հոգ՝ Սրբանտիտի մէջ, գրական խօ-  
սակցութիւն երբեք չըլլար, այդ առաւելու-  
թիւնը ունի չի մոռնամ ըսելու:

Հոգ նստողներու մէջ, որոնք փարիսեակ  
պէս կ'սկս կարմիր կտրած տաքօրէն կը վի-  
ճարանին, երբեք չես լսեր թերթի մը ա-  
նունը, ոչ ալ Ալփիարի բանագողութիւնը կը  
հետաքրքրէ զիրենք. ո՛չ Քասիմի օրուան  
մտածումներուն կը հետեւին, ո՛չ ալ Հայ-  
կանոյ Մառքի խմբագրականները կը յիշեն,  
ո՛չ Հրանդ Մոմէնեանի ոտանաւորները խօս-  
քի նիւթ կ'ընտրեն, ո՛չ ալ Զլդասեանին  
վերագրուած արարքին յիշատակութիւնը կ'ը-  
նեն, ո՛չ ալ Վ. Փափագեանի զաւեշտական-  
ները կը քննադատեն, ո՛չ ալ Ե. Թօլայեանի  
երգիծարան մը ըլլալուն վրայ կը վիճաբա-  
նին, այլ իրենց խօսակցութիւնը կը դառ-  
նայ, քօֆեռին, պըլըֆին, ֆառէին, եւ քիչ  
մ'ալ ... օրուան կիներուն վրայ:

Նստեցա՞ր մի: Հա: Սպասէ:

Կառուսները, որոնց ամէն մէկը Օքսֆոր-  
տէն չըջանաւարտ ինսէյիֆէնսագոյն, մահ-  
կանացուներ են, ձեռքերնին մէկ մէկ լրա-  
գիր բռնած սիւններուն տակ մարմարէ ար-  
ձաններու պէս խորասուզուած իրենց ըն-  
թերցանութեան մէջ, նկատի առգամ չեն  
առներ թէ, նոյն պահուն մայր-ճանճ մը ե-

կած թառած է կէս խմուկ պիւլայի գաւա-  
թի մը մօտ: Եւ կըլլայ որ անոնցմէ մին,  
նինէին հոգուն բարեհաճի քեզ մօտենալ,  
ոչ թէ իր կառսօնի պարտքը կատարած ըլ-  
լալու համար, այլ, ձանձրացած ըլլալուն  
կարդացած յօդուածէն, որուն նիւթը չէ  
հասկցած անպատճառ:

Գոմանտդ տուի՞ր: Հա', սպասէ:

Եթէ Թափառական Հրեան, եւ կամ  
Հիւկօի les miseralesը չես կարդացած, այդ  
ահագին հատորները հետդ առ եւ սկսէ  
կարդալ, կ'երգնում որ FIN բառը հազիւ  
կարդացած թէ չէ քոմանտդ պիտի գայ,  
բայց պիւլայի տեղ, օղի, որովհետեւ կառ-  
սօնը 360 օրուան քնհատութենէն խելքը  
զլուխը չէ:

Առաջին գաւաթը կուլ տուի՞ր: Հա',  
սպասէ:

Երկրորդը դեռ չեկած, արդէն, դուրսը  
թռամվայները դադրած կըլլան երթեւեկելէ,  
կազերու պիքերը կէս մը գոցուած:

Ահա Բերայի Սրբանտիտի նկարագրու-  
թիւնը իսկական վիճակին մէջ: Ես որ Բե-  
րայի անունը կը կրեմ ի սկզբանէ Ս. աւա-  
զանին, կարծեմ կրցայ գաղափար մը տալ  
այդ Հայ-լայֆ քաղինօին վրայօք:

Դեռ պիտի շարունակեմ խօսիլ եւ գրել  
Բերայի գիշերային կեանքին վրայ, եթէ  
գրութեանս հաւնուի, իսկ եթէ չի հաւնուի...


Յոտնութիւն յաջորդիւ:

Գ. ՄԻՅՄԱՐԵԱՆ

Տօքթէօր մը այցելութիւն տալով  
հիւանդ տիկնոյ մը, կը բացատրէ իր  
դեղագիրը:

— Անանկ դեղ մը կուտամ կոր որ  
նախ քեզի հարբուխ պիտէ ընէ ու  
վերջը պիտի աղէկցնէ բոլորովին:

— Անանկ է նէ, կը պատասխանէ  
հիւանդը շփոթած, առաջ հարբուխի  
դեղ մը տո՛ւր:



**ԽՕՍՔԵՐ ՆՈՐ ՏԱՐԻՒՆ**  
**ԲԱՅՑ ՆԱԽ ԽՄԵՆՔ ՍԱ՛ ԳԱԴԱԹ ՄԸ ԳԻՆԻՆ**  
 (ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ)

Ո՛հ, խաչ որ անտանելի կամ ոչ տանելի տափակութիւն մըն է աս պարզապէս, տափակութիւն մը որ այսչափ կըլլայ:

Մտածեցէ՛ք, եթէ ժամանակնիդ ոսկի կամ արծաթ չէ, սա՛ մեր խեղճ երգիծաբաններուն վիճակին վրայ, մարդիկ որոնք ստիպուած են գրել յօդուածներ լեցուած սաչափ թօնօ սրամտութեամբ:

Ո՛հ, ասիկայ չքաշուիր, վիճակահանութեան մը պէս:

Ամէն գրագէտ որ բան մը պիտի գրէ ամանորի առթիւ, — ճիտի պարտք — պարտիք պարանոցին պիտի ըսէր Տիգրան Ե՛լքէնճեան, շատ շատ կը մտածէ գտնել նիւթ մը անկոխ, սիրուն ու ... լացնող, որուն մէջ ուզէ չուզէ ժանգոտած մզլած ratalinօ բառեր, պարբերութիւններ պիտի գործածէ, լարտելու համար յօդուածը, որուն վերնագիրը միայն բաւական է ... չի կարդացուելու համար:

Բայց ի՛նչ բան աւելի դիւրին քան ստիպել մէկը որ լայ, խնդիրը խնդացնելու վրայ է: Արդէն անչափ լալկան ենք, այնչափ որ արցունքի հատիկները քիթերնուս ծարն է եւ ամենապզտիկ թնդիւն մը կը բաւէ զանոնք հեղեղներու փոխելու համար:

Առտուն կեղանք եւ մինչեւ իրիկուն կուլանք արդէն:

Կուլանք շուկային մէջ, կուլանք եկեղեցիին մէջ, կուլանք սրճարանին մէջ, վերջապէս ո՛ւր որ, որո՛ւ ալ որ հանդիպինք լալով եւ դառնացեալ սրտով կը պատմենք թէ, մեր կինը օրը երկու օխայ հաց կուտէ, եւ թէ ինք ուտելէ վերջ մեզի ալ մոխիրի վրայ պիտի նստեցնէ, թէ մեր զաւակները դեռ մարդ չեն եղած, թէ մեր վարժարանները գլուխնին առած կերթան կոր, թէ մենք ալ անոնց ետեւէն կերթանք կոր, թէ, թէ, թէ, թէ, թէ, թէ, վերջապէս անհատնում թէեր, որոնք կը համոզեն նոյն իսկ քեզի եւ վայրկեան մը կը խորհիս թէ՛

մի գուցէ ըսուածները ճշմարտութիւններ ըլլան: Այդ լալկանները, դասը երանելի քիթիւններու, իրենց խօսքերուն մէջ ա՛յնքան պարզութիւն, ա՛յնքան անկեղծութիւն եւ տեսակ մը ա՛յնպիսի միամտութիւն կը ցուցնեն որ, ուզես չուզես կ'արգահատիս ինքզինքիդ վրայ, դպրոցին վրայ, վարժուհիներուն վրայ, Զըլատեանին վրայ, դրսցուհիներուդ վրայ, կը մեղքնաս նոյն իսկ հետդ խօսողը եւ կը ցուիս որ ձեռքէդ բան մը չգալէ զատ, գրպանդ ... Թաշկինակ մըն ալ չկայ դիմացինիդ արցունքը սրբելու համար:

Աղէկ՝ Ս. պատուիրանը զխուս վրայ, բայց թաշկինակին հատը քառասուն փարայէն պակաս չեն տար եւ արցունքը ապահովաբար բալթօյին քղանցքով չէ որ պիտի սրբեմ:

Բայց ասիկայ անհանդուրժելի է ... :

Այսպէս, բուն իսկ այս միակ պատճառով — մեր լալկանութիւնովը — դժուարութեան կը բաղխին, անկարելիութեան կը մատնուին, ամէն անոնք որոնք կոչուած են ժողովուրդը խնդացնելու, զայն զուարճացնելու ու ժամանցներու հաճելիները պատճառելու անոնց:

Որովհետեւ գիտէ՛ք որչափ դժուար է միշտ լացող մանկան դէմքին վրայ ժպիտ մը առաջ բերելը:

Ու ահա անցեալ օր ալ երբ կը խնդրէին ինձմէ յօդուած մը՝ ամանորի առթիւ, անմիջապէս մտքիս առջեւ ներկայացաւ այն ծանր ու դժուարին պաշտօնը՝ խնդացնելը, որուն յանձնառու եղած եմ:

Սիրուն ու սրամիտ յօդուած մը, բայց ընտո՞ր:

Չեմ կարծեր որ անձնասպան ըլլար Ամերիկացի սրամիտ երգիծաբան մը, որ անցեալ շարթու, տափակ յօդուած մը արտադրած ըլլալուն համար ինքզինքը երեք յարկէ վար փողոց նեցած էր ... սրամտօրէն: Երանելին:

Իսկ եթէ մեր մէջ ամէն տափակ յօդուած արտադրող ինքզինքը պատուհաններէ վար նետէր, ո՛հ, ապահովաբար այսօր, զրկուած պիտի ըլլայինք մեր շատ մը տաղանդաւոր գրագէտներէն, մեր մեծ հրա-

պարակագիրներին, մեր ներհուն բանասերներին եւ եթերային բանաստեղծներին: Բայց, Աստուած մի արասցէ, մերինները, բարեպաշտ, աստուածավախ ու քրիստոնեայ գրագէտներ են եւ անանկ բաներու համար խենթ չեն որ ելլան անձնասպան ըլլան եւ յետոյ առանց դամբանականի երթան հայրիկ Արրահամին գիրկը:

«Ահ՛ այն ասեմ ես կը մեռնիմ»

(Դուրեան)

Խօսքը մէջերնիս սակայն, ես ալ իմ մասիս երբեք առանկ բան մը չպիտի անցընէի մտքէս, եթէ նոյն իսկ ըսէին թէ «յօդուածը տափակագոյն է քան տափակ պատուականս»: Հոգս. եթէ այդչափ անյարգի են տափակ յօդուածները, այն ատեն ես ալ կը փոխեմ ուղղութիւնս եւ ... կը մշտնեմ քովի փողոցը, — խօսելու կերպ մը — արագորեւ համար, ոչ թէ տափակ, այլ անկիւնաւոր յօդուածներ: Եւ ոչ թէ՛ ինքզինքս անմտաբար կը նետեմ ծովը, ուր մտնելը ամառը միայն հաճելի է՝ ան ալ ելլալու պայմանաւ:

Ապուշութեան գերագոյն աստիճանին (48) հասած ըլլալու է մարդ, որպէս զի Հոլմէի դեղահատները կլլէ: Եւ կամ սիրած մէկ կնիկը ուրիշի մը գիրկը նետուած ըլլալուն համար, ինքն ալ արժան դատէ ... Երեք յարկէ վար նետուել, նախապէս վստահ չըլլալով որ վստի իրեն կսպասէ մէկը, զինքը ... գրկարաց ընդունելու համար:

Կաղանկի, նոր տարիի յօդուածիս կըսպասէք կարծեմ դեռ:

Ինչ պահանջկոտութիւն եւ որչափ վրաս իյնալ:

Կարծես թէ սնանկ մըն եմ եւ առնելիք մընէ որ կը պահանջէք:

Ներօղութիւն սակայն, դեռ սնանկանալու միտք չունիմ, եւ առ այժմ ի վիճակի եմ ամբողջացնելու կաղանդի առթիւ գրած սա յօդուածս, որ ճիշդ 2 1/2 օրայ կազի ըյտով գրուած է:

Ուրեմն.

Գուչլա՛ր, գումրուլա՛ր,

Կաղանդի առթիւ գրուած ամէն յօդուած անթուսափելիօրէն այս տեսակ սկզբը-

նաւորութիւն մը պէտք է ունենայ, եթէ ոչ ինչիս գրագէտը կըլլա՞նք: Կաղանդ մը՝ որ առանց խուշի եւ առանց խուրուի կուգայ, կը նմանի նոր հարսի մը որ իրեն էն կարեւոր ու պիտանի մէկ բանը, տունը կամ դըրացիին տղուն քով ձգած փեսին քով կ'երթայ:

Ուրեմն Պ. 1906ը որ ծնաւ, իր առաջին ճիշդ եղաւ գուչլա՛ր, գումրուլա՛ր: Այս գոյգ մը բառին մէջ արդէն ամբողջ դամբանականը կայ Պ. 905ին եւ դամբանականը Պ. 906ին:

Մեռնողներուն ետեւէն, ինչպէս է Պ. 905ը, տխուր ու լալկան դամբանականներ խօսիլը՝ ձգելով մեր եկեղեցականներուն, որոնք քարերէն արցունք եւ նոյն իսկ Արրահամու զաւակներ կը հանեն, դառնանք մեր նորածինին, սիրուն պէպէին՝ Պ. 906ին, որ նա՛ տեսէք ժպտագին կը նայի:

Սիրելի պէպէս, ո՛վ քնքոյշը 906իկ, ի՞նչ ալ սիրուն են սա ոսկեթել մազերդ, (փոխաբերաբար), մինիւնիկ ոտքերդ ու ձեռքերդ, կեռասագոյն չրթներդ եւ մարգարտանման ակօսներդ, ո՛հ աղւորիկ պէպէս մի մի՛ լար, եւ մի՛ այդպէս պօռար. նա՛ քեզի շաքար ու զածիդ չափ, եւ դեռ ի՞նչ որ կուզես: Աչքերդ չորս կողմէ պտացուր եւ տե՛ս թէ՛ ամբողջ աշխարհ ի՞նչ ցնծութեամբ կը տօնէ քու ծնունդդ:

«Այ Վասիլիս երհիթի,

Աթօ քին կեսարեա,

Վասրայի գոշա ֆե խարթի,

Խարթեա ֆե գաշամարի» . եւլն.

Այս աղաղակը Բերայի ամբողջ փողոցներուն մէջ կը լսես բնական է, յոյն լալտներու կողմէ, որոնք տարին ամբողջ կսպասեն, միայն քու ծնունդդ փառաբանելու համար:

Բայց անփորձ ես դեռ սիրելի 906ս, ուրեմն մտիկ ըրէ սա՛ հայրական խրատներուս, եւ ջանայ որ օգտուիս անոնցմէ:

Ամէն բանի մէջ մի՛ մտնար եւ մանաւանդ դրացիիդ տունը՝ երբե՛ք:

Ամէն խօսքի մէջ մի՛նար՝ պարտէզին հօրք երբե՛ք:

Մերկութիւնք ամօթ բան մ'է եւ հացա-

գործին քու հաշույդ ձգած պայաթ հացերը 35 փարայէն սեպէ :

Նայէ որ ամէն մարդու ըսածին եւ ամէն օրացոյցի գրածին ականջ չկախես, որովհետեւ նախ որ կեղծաւորներ շատ կան, եւ յետոյ ամէն օրացոյց կրօն. ժողովի քննութեանը չյանձնուիր :

Բարեւ ըրէ Պ. Մարտ ամսուն եւ ըսէ որ քիչ մը մէկ կողմ թող ձգէ խենթութիւնները : Խօսէ իրեն, այդ չարածնին, թէ իր այդ փոփոխամտութիւններովը շատ գէշ անուն մը չինած եւ բոլորովին վարկաբեկ եղած է : Օրը մէկ քանի տուգինա օդ փոխելը ո՛ւր տեսնուած է :

Կոյսին եւ թուզին սա՛ սիրահար մարդկութեան ինքզինքդ սիրցնել տալու համար, պտղատու ըրէ թզենիները Իգմիրի, երբ կը տեսնես որ անոնց վրայ սկսած են, նոյն իսկ վարդապետներ ալ երեւիլ :

Հալած իւղի պէս ամէն գովասանք մի կընթերցես, որովհետեւ հիմայ հրապարակը տնարատ իւղ շատ քիչ կը գտնուի :

Մարդ եղիր, բայց գիտցած ըլլաս որ մարդ չես ըլլար, եթէ նախ Քառնէկի մը, Մորկան մը կամ Ռոջիլտ մը չըլլաս :

Ծովու վրայ գտնուած միջոցիդ նայէ որ յոյս չդնես ո եւ է մէկուն վրայ :

Երբ կը տեսնաս թէ բարկացած մէկ միջոցիդ, մարմնէդ տաք եւ պաղ ջուրեր կանցնին, ինչպէս կըսեն, անմիջապէս փոխէ ջուրիդ ճամբաները եւ տար սառնի՛մ մը քնցուր, գոնէ տանտիրուհիին օգտակար կըլլաս :

Սիրէ ընկերդ, սիրէ դրացիդ, երբ մանաւանդ ախորժարեր կորիկութիւններ ունեցող կին մըն է ան :

Այսպէս սիրելի պէպէս, գնա՛ շարունակէ ճամբադ :

×

Ահաւասիկ ամանորի յօդուած մը ձեզի : Thesea միեւնոյնն է, varianteները փոխուած են միայն, ուրիշ ոչինչ :

Եթէ ոչ, ապուշ մը ըլլալու է մարդ, որպէս զի կաղանդի պէս աղւոր օր մը, ըսէ ապուշ ու տափակ բաներ, երբ այդ օրը մանաւանդ տգեղ բաներ լսելու համար սահմանուած թուական մը չէ :

Ծաղիկի եւ ժպիտի, ցնծութեան եւ հրճուանքի, գորովի եւ սիրոյ, գրկախառնութեան եւ համբոյրի, ներքին գոհացումի եւ արտաքին փայլի այս օրը փոխելու չեն անոնք, որ ակնոցով յոռի կը նային կեանքին, ժամանակէն կը քաշուին, սիրտերնին տենդ ունի եւ մտքերնին մոլորում :

Այլապէս . . . :

Բայց յօդուածս երկարեցաւ, մնացեալը յաջորդ տարի :

ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ

## ՀԱԳԻՆՍԻՆ ԱՏԱՄՆԱԲՈԾԵ ԵՂԲԱՅՐԸ

Գեղեցիկ առաւօտ մը՝ արեւը դեռ չի ծագած, աքաղաղները խօսելէ դադարած, նազելաչուք տիկիներէն շատեր տակաւին կըր մըր կը դառնան իրենց անկողիններն ուն մէջ կէս քուն կէս արթուն, մինչ վարը սպառնահները պատրաստ են շատոնց ի վեր ընտանիքին մէկ անդամին հրամանը ի դործ դնելու, եւ ահա այս պահուն ես ալ տէնկէ մէկէն կարթննամ ակուայի խիստ զօրաւոր ցաւով մը :

Երանի անոնց՝ որոնք ակուայ չունին եւ ակուայի ցաւ ալ չունին, եւ եւս աւելի երանի անոնց՝ որոնք ակուայ ունին եւ ակուայի ցաւ չունին, կը մտածեմ անմիջապէս ես ինծի :

Բայց ճար մը կը պօռամ գլուխս ձեռքերուս մէջ առած :

Քացալս, օղի, լիմոն, քոնեակ բերէք, կը պօռամ, միշտ կը պօռամ :

Քացալս, օղի, լիմոն, քոնեակ կը բերեն, ու միշտ կը բերեն :

Ամբողջ տնեցիք գործի վրայ են, չուարած անդին ասդին կը վազեն, մէկը քացալը շիշով բերանս լեցնել կը համոզէ, ուրիշ մը ( որ երբէք չէ շփոթած .° ) պարապ գաւաթ մը բերնէս ներս խօթելու կաշխատի : Ո՛հ. Աստուած իմ, ներքէ մեղաւորիս կը մայեմ . . . :

Վրան սեւ խալկաւ դնենք, կըսէ մէկը : Այո՛ դնենք, կըսէ ուրիշ մը :

Այո՛, դրէք կըսեմ ես ալ իմ կարգիս :

Հըմ, հիմ, հը, խալկաւ կը հասկնամ, բայց անոր սեւը, իրա՞ւ կըսէք . . . :

— Իրա՛ւ կըսենք, կը պոռան ներկաները միաճայն . . . :

Եւ արդարեւ կը բերեն սեւ խավեարը, կը տեսնեմ զայն իմ սեփական աչքերովս, եւ զարմանալի բա՛ն, անոր ներկայութեանը ցաւը քիչ մը կը հանգարարի . . . :

Կը մտածեմ թէ երկրի վրայ ապրող շատ մը մարդիկներ առոր ներկայութենէն զըրկուած են, եւ առիթը ներկայանալուն երբ զէմերնին առնեն սեւ խալեարը կու տալու համար փառաւորապէս, այնչափ երկար տաւրիներ իրմէ հեռու գտնուողները տեսնելուն ինչո՞ւ ամօթէն չի կարմրիր, եւ ինչպէս հիմակ ալ աներեսաւոր քովս եկեր եւ զիս տեսնելուն երբէք ամօթէն չի կարմրիր . . . :

Ծիկսուռաթը, կը մրմնջեմ . . . :

Ու կը մտածեմ ուտելէ աւելի կլլել սա անպիտանը, որ տեսնայ թէ ես ինչ կընեմ այս տեսակ աներեսները . . . :

Ու մատ մը կառնեմ բերանս կը տանիմ, ակոյայի վրայ դնելու, զարմանալի՛ բան, կուլ կուտամ, համը աղէկ, բայց կը ցաւիմ չիտակը իր քիպիր բնաւորութեանը վրայ, եւ կը մտածեմ թէ կարելի չըլլա՞ր արդեօք այդ յոռի բնաւորութիւնը բարեփոխելու համար վարժուհիի մը խնամքին յանձնել . . . :

Բայց, վարժուհիները որո՞ւ խնամքին յանձնել կը խորհիմ . . . :

Պատառ մը եւս կառնեմ ցաւած ակոյայի վրայ դնելու, այլ սակայն ողջ ակռաներս իրենց քով վար կը դնեն, ողջ ստամոքսիս զրկելու պայմանաւ . . . :

Անոնք ալ իրաւունք ունին կըսեմ, եւ այսպէս սեւ խալեարը փտած ակոյայիս աւոգուտ, եւ ի շահ ողջ ակռաներուս կապուռի կը լմնայ՝ Հիւանդանոցի լուցկիներու գործածութեան պէս . . . :

Եւ ինչպէս որ լուցկիներու գործածութիւնը սպառելով՝ ծախող անձը տակաւին Հիւանդանոցի հաշոյն կը մնայ անխախտ եւ անսասան, անանկ ալ սեւ խալեարին տուփը քովիկս կը կենար պարապ, իբր. անարժէք բան մը . . . :

Տխուր պարագայ, աններելի մեղք, անգառնալի կորուստ, թէ՛ սեւ խալեարին սպառիլը եւ թէ՛ Հիւանդանոցի լուցկիները ծախողը Հիւանդանոցի հաշոյն մնալը . . . :

— Բայց, հայր իմ, ինչո՞ւ սեւ խալեարի վաճառակութեամբ չգրաւեցար, գէթ մէկ օր քու կեանքիդ մէջ. կը պոռամ ակոյայիս ցաւէն խիստ յուզուած . . . :

— Տղաս, յարմար խանութ մը չգտայ, կը պատասխանէ պաղարկնութեամբ մը, իբր թէ կեանքին մէջ երբէք ակոյայի ցաւ ունեցած չըլլար . . . :

— Գիտեմ . . . գիտեմ . . . կըսեմ . . . :

Բայց, նկատելով որ, տակառ մը խավեարը բերնէս վար ալ լեցնէին, դարձեալ օգուտ մը չափտի ընէր ցաւին առաջը առնելու համար . . . :

Եւ նկատելով որ ցաւը քառասորակ կարչաւէր բերնիս մէջ, եւ միւս կողմէ պէտք է քաշել տաս կը պոռային մէկ քանի թշնամիներս (թէ եւ ատոնք մտերիմներս եղած ըլլային), ուղեցի որ քիչ մը մտածեմ, ու որոշեմ, եւ մտածելով է որ միայն կրցի որոշել թէ պէտք է քաշել տալ, ուրիշ ճար չկար . . . :

Ու այդ բարեկամներէս մէկուն (այն օրու ընէ սկսած եմ խերը անիծել) խօսքին ապաւինելով ներկայացուցած մէկ տտամնարոյժին դիմեցի . . . :

Հարկաւ կապասէք որ ես ալ ձեզի ներկայացնեմ ինձ ներկայացուած տտամնարոյժը՝ Կարճ հասակաւ, կլորիկ փորով եւլն. մէկն էր այդ, եւ կը կարծեմ որ կրցաք հասկնալ մնացածալը . . . :

Եւ երբ սենեակէն ներս կը մտնեմ, առաջին առթիւ կը զարմանամ թէ ինչո՞ւ ոտքի չելլեր տտամնարոյժը զիս տեսնելով, քանի որ յաճախորդ մըն էի, մինչդեռ շատ մը խանութպաններ, նոյն իսկ վաճառականներ իրենց յաճախորդներուն դէմ ոտքի վրայ տասը թախլան մէկ կը նետեն, ապրանքնին քշելու համար, բայց զարմանքս աւելի մեծ կըլլայ երբ նստած կարծուած մարդուն ոտքի վրայ ըլլալը կը հասկընամ . . . :

Գաճաճները . . . կը մոլտան . . . :

— Բարեւ պարոն Զագէ . . . :

— Բարեւ . . . պարոն . . . :

— Ո՞վ կըսուիք հրամանքնիդ . . . :

— Ես Հայ . . . (իբր թէ արհեստին հետ ո եւ է առնչութիւն ունեցած ըլլար, ապուր ուտելուն մէկ կերպը) նշանաւոր տանթիստ . . . :

մըն եւ՛, չատ ճարտարօրէն եւ անդգալի կերպով ակռաներ կը քաշեմ, ու խիստ նորագոյն ձեւերով ակռաներ կը շինեմ, եւ նոյն իսկ գաւառներէն յանձնարարութիւններ ալ կառնեմ ...

— Աղէ՛կ, աղէ՛կ, կընդմիջեմ, մարդուն շարժումներուն խնդուքս հազիւ զսպելով:

Բայց ի՛նչ նշանաւոր ատամնաբոյժ, կըսեմ ես ինծի:

— Նստեցէք, պարոն.

Կը նստիմ:

Ատամնաբոյժը վրան կոխելիք աթոռի մը վրայ ելելով կը խնդրէ որ բերանս բանամ, եւ ես չի դիմանալով իր խնդրելու ձեւին, բերանս կը բանամ կրցածիս չափ, մեր մարդուկը կարծելով որ զինքը կլլելու համար համար իրեն ներկայացուեր եմ, կսկսի զընկըռ զընկըռ դողդղալ, եւ կայնած աթոռին վրայէն վար իյնալով աչքիս առջեւէն անյայտ կըլլայ:

— Բայց, ո՛ւր ես, բարի քրիստոնեայ, կը պոռամ, կողերս ցաւելու աստիճան խընդալով ...:

Եւ մեր բարի քրիստոնեան, որ քիչ առաջ ինքզինքը հանձար կանուանէր, իր աչկերտին օգնութեամբ քիչ մը փնտառուքէ վերջ, նստած աթոռին տակէն դուրս կը քաշենք աներեւակայելի գծուարութեամբ:

Խեղճ մարդ, դեռ կը դողդղար ...:

— Բայց, պարոն տանթիսթ ինչո՞ւ ...:

— Բայց, պարոն պէտք էիք գիտնալ որ բերան մը այդ աստիճան կարելի չէր բացուիլ:

— Բայց ակռաս ցուցնելու համար ...:

— Իրա՞ւ կըսէք, զարմանալի՛ բան ...:

(Եւ մարդուկը զարմանալու այնպիսի ձեւ մը կառնէ որ քիթին բերնին տոմաթէս մը փակցնելու չարաչար իրաւունքը ունէի, բայց աւա՛ղ որ չկար, եւ կը խորհէի թէ ինչո՞ւ ասանկ խեղճ ատամնաբոյժ մը գոնէ մէկ երկու օխա տոմաթէս չի պահեր իր սենեակին մէջ ...):

Պահ մը հանգիստէ վերջ, Պրն. ատամնաբոյժը կը խնդրէ որ բերանս բանամ, այնչափ քիչ որչափ որ կրնամ ...:

Կը բանամ բերանս այնչափ քիչ որչափ կարելի էր, եւ մեր ատամնաբոյժը, Զագէ-

ոսին եղբայրը, գործիքը ձեռքը ծայրագոյն աստիճան բռնարարելի ձեւերով գործիքը ակռաիս վրայ կը դնէ ու կսկսի էջերու պէս ու յետոյ գոմէշներու պէս քաշել, ու ակռաս կը կտարի, չաթըն չըթըն ... ծայներու մէջ:

— Եւ մեր մարդուկը հպարտ (չեմ գիտեր ինչ բանի համար) աթոռէն վար կը ցատկէ ու սենեակին մէջ կսկսի այծերու պէս ցատկել ասդին անդին:

Հա՛յ սոսկալի մարդ ... կը պոռամ:

— Բայց, ինչո՞ւ այդչափ պոռացիք:

— Բայց պարոն, չաթըն ... բաթըն կը պատասխանեմ, բարկութենէս մոխիր դարձած (կրակ կտրելու աստիճանէն անցած):

— Եւ սակայն մեծ բան մը չի մնաց մէջը, ըսելով միշտ մանկապարտէզի վարժուհիներու պէս կը ցատկէր ...:

Ալ հոն գործ չունէի ես, եւ հովանոցս ձեռքս սանդուխներուն չորս ոտքը մէկ առանելով ի՞նչ կը փախիմ, օձիքս աղատելու համար սա մեծախօս ատամնաբոյժին ձեռքէն, ու շունչս կառնեմ հոն մօտը գտնուող մէկ ուրիշ ատամնաբոյժի մը:

ՄԱՐԳԱՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1803

Կ. Պոլիս, Մեծաւ փողոց, թիւ 57

Օտնանեան Պատմութիւն մինչեւ մեր օրերը Մ. Աշտեան Ղր. 4

Գոհարմասեանիկ, երկսեռ վարժարաններու ուսանողներու ընթերցման արժանի լաւագոյն դասագիրքը Ղր. 5

Զուգասրահան Ընթերցարան. տարրական կարգերու. իր տեսակին մէջ բոլորովին նոր Ղր. 3

Մանկավարժական Քերականութիւն. Գ. մաս. պատկերներու վրայ իր աննման ոճովը կը սորվեցնէ Հայերէն Քերականութիւնը Ղր. 4

Հայերէն Լեզու կամ Վարժութիւն Գրաբարի, կ'ուսուցանէ գրաբարը հասկնալ ու թարգմանել, առանց հոլովները ու բայերը ի բերան սովորեցնելու: Ղր. 4

ԿԱՐՃ միջոցի մէջ Անգլիերէն կամ Ֆրանսերէն սովորել փափաքողներու միակ գիրքը ՄԱՅՍԹԵՐՍԵԱՔԹ ՍԻՍԹԵՄ. 15 տեսարերու գինը Ղր. 30

## ՊԱՂԱՆԴՋԻՔՆԵՐԸ

Հատ սովորականին, չի գրկելու համար իմ գրչի բարեկամներս իրենց կաղանդէքներէն, այս անգամ կը փութամ սրտաբուխ նուէրներս մատուցանել, խնդրելով միանգամայն որ նուէր բառը իր լայն առումով ընդունին եւ քիչի շատի խնդիր չի հանեն չուրջս:

Կը նուիրեմ:

Ռ. Յ. Պերպերեանին. — Ոսկեզօծ աչպօմ մը, որուն մէջ գտնուին իր բոլոր շքանշանաւոր տաները, երախտագիտական ժըպիտն ի չրթունս:

Մ. Մեզպուրեանին. — Սկիւտարի երեք միացեալ թաղերու տիրացուպետի շապիկ մը ոսկեհիւս զլաբտաններով:

Վահան վրդ. Տեր-Միկսեանին. — Մին եօն արկղիկ մը, թաւունճեանի մրցանակը պահելու համար:

Չապէշ Ասասուրին. — Անարատ կանանց յատուկ թերթի մը գաղափարը:

Հրանդ Ասասուրին. — Այդ սպասուած թերթին վարչութիւնը:

Ա. Փանոսեանին. — Յանգարանի սըրբազրեալ եւ ճոխացեալ հատորի մը հեղինակութիւնը:

Չապէշ Եսայեանին. — Սկիւտարի բարձունքը վիլլա մը, ուր կարենայ երգել բընութեան սքանչելիքները:

Բիւզանդ Բեչեանին. — Առաւօտեան թերթի մը գաղափարը:

Յովհաննէս Գայսերեանին. — Երեկոյեան թերթի մը գաղափարը:

Արեւելին. — 200 քաշ տասը բունթօ գիր:

Մասիսին. — Վակօն մը թուղթ եւ ամաքեօն գրաշար մը:

Յ. Ճեմիզեանին. — Քամիլ Յիւսէֆի Լամպիւրս անուն հսկայ հատորը:

Փռնիչին. — 1000 հատ ֆառք, որոնց ամէն մէկուն վրայ գրուած ըլլայ «Կը խընդրուի մեր բաժանորդներէն իրենց պարտքը վճարել անյապաղ»:

Հայկանոյշ Մառիին. — Մանկապարտէզ մը բանալու գաղափարը Յիօպեոեան գրութեամբ:

Նիկիին. — Կիրակնօրեայ վարժարան մը, ուր կարենայ սովորիլ Օրագրութիւնը, Ե. Թօլայեանէ եւ Պէպրիս Շահինեանէ:

Արամ Անսօնեանին. — Ոսկի մարակ մը, որպէս զի լաւ մարակէ աջ ու ձախ:

Պէպրիս Շահինեանին. — Ոսկի գրիչ մը, որպէս զի իր յօդուածները մատիտով չի զրկէ մեզ:

Ծաղիկին. — Երկոտասանիկ մը տօմիսօ:

Արեւելեան Մանուշին. — Երեք հատոր օրինագիրք, որոնցմով կարող ըլլայ պաշտպան փաստաբանը հանգիստնալ իր բանագործ յօդուածագիրներուն:

Քաւիւմին. — Ոսկի կլկլակ մը, իր ակնոցին փոխիւմ փոքրիկ:

Ե. Տեր-Անդրեասեանին. — Վաղինակի վերջին յօդուածը մագաղաթի վրայ գրուած:

Գրիգոր Թորոսեանին. — Ինքնաշարժ զոյգ մը պօթեր, որպէս զի Պատրիարքարանէն շուտ քաղէ իր նօթերը:

Ժ. Շիրակացիին. — Տուփիկ մը ֆուռ-Վաղինակ:

Յ. Արշիարին. — Մատի քրօնիկագրին՝ Harduin ի մեծադիր լուսանկարը, մահճակալին վրայ կախելու համար:

Թեոդիկին. — Ողորմեսցի մը եւ արձակեայ մը, որպէս զի վերսկսի իր այնքան սիրական գրականութեան:

Յ. Մ. Ազնաւորեանին. — Ոսկի սիրուն ակնոց մը՝ լաւատեսի աչքերով զիտելու կիները եւ ... օրուան գրողները:

Ե. Արմենին. — Չոյգ մը échasses նիւթերը ալ աւելի բարձրէն հովուելու համար:

Ե. Թօլայեանին. — Դիմացկուն արդուկ մը, որպէս զի Սրբուհի Բիւշիկեանի հետ լաւ կերպով արդուկէ ... գլուխները:

Վաղինակին. — Թէեւ չէր արժէք նոյնիսկ տասնոց սիկառնիկ մը նուիրել իրեն, բայց մենք անաչառաբար կը նուիրենք պախըր յեմեն մը, իրեն հակառակ գրչի մարդիքը հոն լուալու համար, իր լուացողի ճարպիկութեամբ եւ փորձառութեամբ:

Իր բոլոր ծանօթներուն եւ բարեկամներուն, նոր եւ երջանիկ տարի մը կը մաղթէ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

# ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

**ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ.** — Չուխաճի խանի մէջ շաբթուս տեղի ունեցած ստոր և անբարոյական արարքի մը նկարագրութիւնը յաջորդ թիւով :

**ՍԿԻՏԱՐ.** — Թղթախաղը արգիլւելէն ի վեր, սրճարաններու յաճախորդք կլկլակի տուած են ինքզինքներն, որով մէն մի սրճարան մանածի ֆապուիգա մը դարձած է շարունակական կուռուլտութիւններէն :

**ԳԱՏԸ-ԳԻՒՂ.** — Կը լսենք թէ՛ Բըթի Բերա անուանեալ այս արուարձանին Հայ-լայֆ տիկիներն ալ սկսած են բոֆեր խաղալ ընտանեկան երեկոյթներու մէջ, և թէ ոմանք խաղին մէջ տեղի ունեցած պրըֆներէն վարժուելով սկսած են իրենց ամուսիններուն քիթին ալ պրըֆ քաշել :

**ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ.** — Չլղատեան վարդապետը գործած մեղքին քառութեան համար Հիւանդանոց տարուեցաւ :

**ՀԻՒԱՆԴԱՆՈՑ.** — Աղէկ է, բան մըն ալ չունի :

**ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ.** — Անանկ է նէ հոս բերէք, որ իրեն արդար պատիժը տնօրինուի :

**ՉԼՂԱՏԵԱՆ.** — Թէօպէ՛ . . . :

**ԲԵՐԱ.** — Կաղանդի նուէրներու առթիւ կարգ մը տիկիներ իրենց ամուսիններուն թեւը մտած Սոդի և Բիկմալեծնի խանութները այցելելու վրայ են :

**ՆՈՅՆ.** — Կիրակի կարգ մը օրերդներ լաւ պատասպարուած՝ Շիշիի

կողմը ձիւնագնտակ խաղալով երեկոյին բազկերակներն փոխանակ մէկ մէկ նըշանածի՝ բժիշկներու ձեռք են տուեր :

**ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ** — Շատ նորոյթներ ունեցանք այս տարի, կին խրմբագրապետուհի, կին խնամակալուհի, կին այս ինչ, կին այն ինչ, բայց որ աւելին է՝ . . . կին անձնասպան :

**ԻԶՄԻՏ.** — Շաբթուս տեղացող ձիւնը այնքան առատ էր որ . . . բաժնեդիրներն չի կրցանք զրկել, ներողութիւն : (Գործակալիս վրայ վստահութիւն ունիմ, անիկայ ճամբայ կը բանայ, դուք վճարելիդ նայեցէք. Ծ. Խ.) :

**ԵԷՆԻ-ԳԱՐՈՒ.** — Եկեղեցւոյ պաշտօնեաներէն մին, անցեալները տեղի ունեցած հարսնիքէն նուէր չի կրնալ ստանալուն, բարկութիւնը ժամկոչ աղբարէն առեր է, 40 զրշ կարելով անոր ամսականէն, հրաւիրեալներու դուռ բացած ըլլալուն համար :

**ԲԵՐԱ.** — Գիշերները երկարելուն պատճառաւ, կարգ մը նշանածներ փոխանակ իրենց տունս գիշերելու, նշանածուհիներն թեւերնին առած քաղցրատուները սքեռկալու վրայ են :

**ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ.** — Իզմիրէն մեղլուր կուտան թէ՛ ոմն ոք Յ. Ալփիար, վերջին անգամ ըրած մէկ բանագողութեան երեսէն ամէնուն աչքէն ինկած է . . . (Պատիւէն իյնալը չէք ըսեր. Ծ. Խ.) :

Արտօնատէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ  
Պապը ալի ճատտեսի, քիւ 52



# BOVININE

## ՊՈՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍԵՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵԻՋԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ չորստ անդային մասերն եղան մին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ուղեղային կաղմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անդուգական կազդուրիչ դեղը, 27 տարինեքէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաքոնի և Չինու համաբաւոր բժիշկներէն: Ներմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անխորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անխորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անդուգան յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, Պահճէ-գարու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից միջերանոցներու քով:

50—22

## ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐԶԵԼՔՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց  
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

## Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարինեքէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանք տոկունութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գիմիդ յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քիշլոններու և տղայոց չիք և դիմացկուն ֆութիւլներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ Ներմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Պակարկութիւն չկայ, Թիւր 2 դրշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին: 50—17

## Խ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՊԱՐԻ ԴԱՍԱՏՈՒ

Ներկայ ձմեռնամուտի առթիւ ընտանեկան երեկոյթներու անհրաժեշտ պարը քիչ ժամանակուան մէջ ուսանելու փափաքողը կրնան դիմել իրեն Բերա, ԿալթաՄէրայի դէմ Սիթէ տը Բերայի մէջ Թիւ 11. Պոլսոյ կողմ Մեծ Շուկայ, Գալթաքըճլարի դուռը, Ֆէսճի Սեպուհ աղայի խանութը:



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԸՆՏԻՐ ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐԾ ԵՆ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԵՐ



# Հ Է Ր Ճ Ա Յ Ի

## Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, դրամանի պատի և քօնսօրի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամպարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

### Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկիմացեալ գումարին համար չաբաթական հարիւրին 3 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունն հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 3 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-13

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։







